Հավելված
ՀՀ կառավարության 2011 թ.
մայիսի 20-ի նիստի N 19
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

	Միջոցառման անվանումը	**Միջոցառման նպատակը**	**Ակնկալվող արդյունքը**	**Պատասխանատու կատարողը**	**Կատարման ժամկետները**	**Ֆինանսական ապահովումը (աղբյուրը)**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**
1.	«Բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ներկայացում	Ներդնել բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման համակարգ	Կիստակեցվեն բնապահպանական քաղաքականության հիմնական նպատակների իրագործման ապահովմանը նպատակաուղղված բնապահպանական խնդիրները, դրանց լուծման մեխանիզմները: Համակարգի ներդրման արդյունքում ավելի արդյունավետ կդառնա բնապահպանական ծրագրերի ծրագրավորման համակարգը	ՀՀ բնապահպանության նախարարություն	2013 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե՝ պահպանման ծախսեր

2.	«Բնապահպանական ծրագրերի մշակման/նախագծման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ՀՀ կառավարություն ներկայացում	Ներդնել միջազգային լավագույն փորձին համապատասխան բնապահպանական ծրագրերի մշակման/նախագծման համակարգ	Համակարգի ներդրման արդյունքում ավելի կանոնակարգված կդառնա բնապահպանական ծրագրերի մշակման/նախագծման գործընթացը. կգործեն այդ գործընթացին մասնավոր հատվածի ակտիվ մասնակցության մեխանիզմներ	ՀՀ բնապահպանության նախարարություն	2013 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե՝ պահպանման ծախսեր
3.	Բնապահպանական ծրագրավորման միջազգային լավագույն փորձի հիման վրա մասնագետների շարունակական վերապատրաստում	Միջազգային լավագույն փորձին տիրապետող բնապահպանական ծրագրավորման (ծրագրերի մշակման/նախագծման) կադրային ներուժի ստեղծում	Բնապահպանական ծրագրերի մշակման/նախագծման միջազգային լավագույն փորձին տիրապետող մասնագետների շարունակական վերապատրաստում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2011 թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե՝ պահպանման ծախսեր Միջազգային ֆինանսավորում
4.	«Բյուջետային ֆինանսավորման հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի արդյունքների հետծրագրային գնահատման (մոնիտորինգի) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ՀՀ կառավարություն ներկայացում	Ներդնել բյուջետային ֆինանսավորման հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի արդյունքների հետծրագրային գնահատման (մոնիտորինգի), համակարգ	Կներդրվի բնապահպանական ծրագրերի արդյունքների հետծրագրային գնահատման համակարգ, որի արդյունքում կբարձրանա բնապահպանական ծրագրերի իրագործման արդյունավետությունը, հետծրագրային վերահսկման արդյունքում կբարելավվեն որակական ցուցանիշները	ՀՀ բնապահպանության նախարարություն	2012 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե՝ պահպանման ծախսեր

5.	«Բնապահպանական ծրագրերի արդյունքները բնութագրող տեղեկատվության հավաքագրման, կուտակման, պահպանման և հետագա օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ՀՀ կառավարություն ներկայացում	Ներդնել բյուջետային ֆինանսավորման հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի արդյունքները բնութագրող տեղեկատվության հավաքագրման, կուտակման, պահպանման և հետագա օգտագործման համակարգ	Բնապահպանական ծրագրերի արդյունքները բնութագրող տեղեկատվության կուտակման համակարգը հնարավորություն կտա հավաքագրել և պահպանել բնապահպանական համապատասխան տեղեկատվությունը հետագա օգտագործման համար, այն մատչելի և հասանելի դարձնելով բոլոր սպառողների համար	ՀՀ բնապահպանության նախարարություն	2012 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե՝ պահպանման ծախսեր
6.	«Բնապահպանական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին վերջնական սպառողի մասնակցության ապահովման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ՀՀ կառավարություն ներկայացում	Բնապահպանական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին վերջնական սպառողի մասնակցության ապահովում	Հայաստանի և տարածաշրջանի շրջակա միջավայրի վիճակի բարելավմանը նպատակաուղղված բնապահպանական, այդ թվում՝ նաև մասնավոր հատվածի (ոչ պետական) ֆինանսական միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի ֆինանսավորման ծավալների ավելացում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2013 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե՝ պահպանման ծախսեր

7.	Միջազգային լավագույն փորձին, մեթոդաբանության դասակարգիչներին և ստանդարտներին համա-պատասխան բնա-պահպանական ծախսերի ամբողջական հաշվառման համակարգի ներդրում	Տեղեկատվական աջակցության կատարելագործում՝ բնապահպանական ֆինանսավորման արդյունավետության բարձրացման նպատակով միջազգայնորեն ընդունված մեթոդների կիրառում բնապահպանական ծախսերի հաշվարկման և դասակարգման գործում, ծախսումների մասին միջազգային ստանդարտներին համապատասխան տեղեկատվության պարբերական հավաքագրման համակարգի ներդրում	Բնապահպանական քաղաքականության և ֆինանսատնտեսական գնահատման և վերլուծության միասնական տեղեկատվական բազայի առկայություն, որը մատչելի և հասանելի է տեղեկատվության բոլոր սպառողների համար	ՀՀ բնապահպանության նախարարություն	2012 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե՝ պահպանման ծախսեր
8.	«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ՀՀ կառավարություն ներկայացում	«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքով նախատեսված տնտեսական խթանման մեխանիզմների կիրառման համար կոնկրետ ընթացակարգերի մշակում և ներդրում	«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքով նախատեսված տնտեսական խթանման մեխանիզմների իրագործում կամ կիրառում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2012 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե՝ պահպանման ծախսեր
9.	«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրա-պետության օրենքում փոփո-խություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաս-տանի Հանրապետության օրենքի նախագծի ՀՀ կառա-վարություն ներկայացում	«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքով նախատեսված տնտեսական խթանման մեխանիզմների կիրառման համար կոնկրետ ընթացակարգերի մշակում և ներդրում	«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքով նախատեսված տնտեսական խթանման մեխանիզմների իրագործում կամ կիրառում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2012 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե՝ պահպանման ծախսեր

10.	«Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ՀՀ կառավարություն ներկայացում	«Թափոնների մասին» ՀՀ օրենքով նախատեսված տնտեսական խթանման մեխանիզմների կիրառման համար կոնկրետ ընթացակարգերի մշակում և ներդրում	«Թափոնների մասին» ՀՀ օրենքով նախատեսված տնտեսական խթանման մեխանիզմների իրագործում կամ կիրառում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2013 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե՝ պահպանման ծախսեր
11.	«Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ՀՀ կառավարություն ներկայացում	«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված տնտեսական խթանման մեխանիզմների կիրառման համար կոնկրետ ընթացակարգերի մշակում և ներդրում	«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված տնտեսական խթանման մեխանիզմների իրագործում կամ կիրառում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2014 թ. 4-րդ եռամսյակ	
12.	Շրջակա միջավայրի վիճակի բարելավման և բնապահպանական ծառայությունների ֆինանսավորման գործընթացում մասնավոր և ֆինանսական/բանկային կապիտալի մասնակցության համար առավել նպաստավոր պայմանների, ինչպես նաև բնապահպանական ապահովագրական մեխանիզմների զարգացման համար ՀՀ կառավարությանը առաջարկությունների ներկայացում	Շրջակա միջավայրի վիճակի բարելավման գործընթացում մասնավոր հատվածի մասնակցության համար առավել նպաստավոր պայմանների ստեղծմանն ուղղված իրավական հենքի ձևավորում	Հայաստանի և տարածաշրջանի շրջակա միջավայրի վիճակի բարելավմանը նպատակաուղղված բնապահպանական, այդ թվում՝ նաև մասնավոր հատվածի (ոչ պետական) ֆինանսական միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի ֆինանսավորման ծավալների ավելացում: Բնապահպանական ռիսկերից (աղետներից) իրավաբանական և մասնավոր անձանց սե-	ՀՀ բնապահպանության նախարարություն	2013 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե՝ պահպանման ծախսեր

			փականության պաշտ-պանությանը, պատ-ճառված վնասների վերականգնմանը կամ փոխհատուցմանն ուղղված էկոլոգիական ապահովագրության համակարգի ներդրում			
13.	« Բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ներկայացում	Բնապահպանական միջազգային պայմանագրերով նախատեսված տնտեսական համագործակցության մեխանիզմների ընդլայնում, բնապահպանական ոլորտում մասնավոր ներդրումները խթանող համակարգի ստեղծում	Բնապահպանական միջազգային պայմանագրերով նախատեսված տնտեսական համագործակցության մեխանիզմների, բնապահպանական ոլորտում մասնավոր ներդրումները խթանող համակարգի իրագործում կամ կիրառում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2012 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե՝ պահպանման ծախսեր